

**ԼԵՐԴԱԽՈՏԻ (ՄԱՐԻԱՄԱԽՈՏ ԳՈՐԸ-TEUCRIUM POLIUM L.)
ՍՏԱՆԴԱՐՏԱՎՈՐՈՒՄԸ ԲՆԱԿԱՆ ՖԻՏՈԵՍՏՐՈԳԵՆՆԵՐՈՎ՝
ՖԵՆԻԼՊՐՈՊԱՆՈՒԴԱՅԻՆԵՎ ՖԼԱՎՈՆՈՒԴԱՅԻՆ ԳԼԻԿՈԶԻԴՆԵՐՈՎ**

ԳԱՍՏՅԱՆ Զ.Ս.

Երևանի Ս. Զեքացու անվ. պետական բժշկական համալսարանի ֆարմակոգնոզիայի ամբիոն,
Երևան, Հայաստան

Հանձնված է՝ 20/01/2014 թ., ընդունված է՝ 15/02/2014 թ.

Լերդախոտը (*Մարիամախոտ գործ-Teucrium polium L.*) վաղուց ի վեր կիրառվել է Հայաստանի ժողովրդական բժշկության մեջ՝ աղեստամոքսային տրակտի և կանացի որոշ հիվանդությունների բուժման ժամանակ:

Բույսի մանրակրկիտ հետազոտությունը, գիտական հիմունքներով, իրականացվել է մեր կողմից:

Լերդախոտից անջատվել են 13 անհատական միացություններ, որոնց կառուցվածքները վերծանվել են սպեկտրոֆոտոմետրիկ կոմպլեքսային եղանակներով՝ ինֆրակարմիր, ուլտրամանուշակագույն սպեկտրոմետրիայով, պրոտոնամագնիսական և միջուկամագնիսական ռեզոնանսով, ինչպես նաև մասս-սպեկտրոմետրիկ հետազոտությամբ: Գլխավոր կենսաբանական միացություններն են հանդիսանում ֆլավոնոիդներ՝ ցիրսիլիոլը, ցիրսիմարիտինը, յուտեոլինը, ապիգենինը, ինչպես նաև ապիգենինի և յուտեոլինի գլիկոզիդները, ֆենիլպրոպանոիդային գլիկոզիդներ՝ վերբասկոզիդը, պոլիումոզիդը և տեուպոլիոզիդը: Հանդիսանալով արժեքավոր դեղաբույս՝ բույսն առաջին անգամ մոցվել է անհող մշակույթ: Ստացվել են էկոլոգիապես մաքուր և որոշակի քիմիական կառուցվածքով ծրագրավորված հիդրոպոնիկ բույսեր, որոնք ենթարկվել են էլեկտրոֆիզիոլոգիական փորձարկումների: *In vivo* եղանակով բացահայտվել է բույսի էստրոգենային և անտիխոլինեսթերազային ակտիվությունները՝ պայմանավորված ֆենիլպրոպանոիդային և ֆլավոնոիդային գլիկոզիդներով:

Զանի որ յուրաքանչյուր նոր արժեքավոր դեղաբույսի գիտական հետազոտությունն ավարտվում է դեղահումքի ստանդարտավորմամբ, մեր աշխատանքի նպատակն է՝ բազմաթիվ փորձարկումների արդյունքում վերծանել որակի թվային ցուցանիշներն ու գլխավոր ազդող նյութերի որակա-քանակական հետազոտությունների մեթոդները:

Արդյունքում իրականացվել է դեղահումքի մանրադիտակային վերլուծությունը՝ անատոմոտարբերակիչ հատկանիշներով, ինչպես նաև դուրս է բերվել *T. Polium*-ի որակական և քանակական թվային ցուցանիշները: Ֆլավոնոիդների հանրագումարը որոշվել է սպեկտրոֆոտոմետրիկ եղանակով (ըստ յուտեոլինի (չափակարգման սանդղակի), իսկ ֆենիլպրոպանոիդային գլիկոզիդների հանրագումարը՝ ըստ վերբասկոզիդի տեսակարար օպտիկական խտության: